

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռիս Դիւանը բացառիկ գոհունակութիւնը ունի ի գիտութիւն մեր սուրբ Եկեղեցու ու ժողովրդեան հաղորդելու, որ վերջին հինգ ամիսների ընթացքում Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսարանի միջնորդութեամբ արտասահմանեան բոյր Եկեղեցիների ներկայացուցիչներ ստանձնել են իրականացնել շինարարական ձեռնարկներ Հայաստանի աղէտեալ շրջաններում, ըստ հետևեալի.

1. Իտալական «Քարիթաս» եկեղեցական կազմակերպութիւնը՝ Պատրաստի տնակներ — 250 հատ.
2. Շվեյցարիայի «Քարիթաս»—«Մետսեն Սան Ֆրոնթիեր» եկեղեցական կազմակերպութիւնը՝
   ա. Կառուցել և սարքաւորել բժշկական ախտորոշման կենտրոն Լենինականում.
   բ. Մի հիւանդանոց՝ 90 մահճակալներով.
   գ. Քլենիքներ Ախուրեանի և Ղուկասեանի շրջանների 21 գիւղերում:
3. Ժընևի Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը գործակցութեամբ Շվեյցարիայի «Քարիտաս»-ի և «Տիաքոնիշէ-Վեռք»-ի՝
   ա. Կառուցել մի գործարան՝ պատրաստի տնակներ կառուցող.
   բ. Մի մանկապարտէզ.
   գ. Մի ծննդաբերական հիւանդանոց՝ 100 մահճակալներով:
4. Շվեյցարական բողոքական Եկեղեցիները —HEKS-EPER
   ա. Կառուցել և սարքաւորել մի մանկապարտէզ Ստեփանաւանում:
   բ. Նուիրել քարամշակման սարքեր—5 հատ.
5. Ժընևի Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը և «Քարիթաս»-ը միատեղ, 1989 թուի Ապրիլի 21-ին Էքիւմենիք ինստիտուտի ժողովում որոշում են կայացրել Ս. Էջմիածնին տրամադրելու երկու միլիոն տոլար՝ Սպիտակ քաղաքում նոր յուշարձան-եկեղեցի կառուցելու և այլ նորաբաց եկեղեցիների նորոգութեանց համար:
6. ԱՄՆ-ի «Քարիթաս» եկեղեցական կազմակերպութիւնը յանձն է առել՝ աղէտեալ շրջաններում ուղարկել ամբողջական սարքաւորումներ նորածին երեխաների սնունդ պատրաստող մի ֆաբրիկայի համար, որը պիտի կարողանայ օրական մօտ քսան խորանարդ մետր սնունդ հայթայթել:

Վերոյիշեալ յանձնառութիւնները պաշտօնապէս ստորագրուել են Հայաստանի պատկան իշխանութեանց և տուեալ կազմակերպութիւնների ներ-

կայացուցիչների միջև և գտնում են կենսագործման ճանապարհի վրայ: Որոշ յանձնառութիւններ արդէն իսկ կատարուել են:

Քոյր Եկեղեցիների սոյն յանձնառութիւնների ընդհանուր արժէքը գնահատւում է շուրջ 32 միլիոն ամերիկեան տոլար:

Մայր Աթոռս, հոգեպէս միսիթարուած, յանուն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի, իր երախտագիտութիւնն է յայտնում վերև յիշատակուած բոլոր եկեղեցական կազմակերպութիւններին, նրանց մարդասիրական աննախընթաց հոգատար վերաբերմունքի համար:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
5 Հոկտեմբեր 1989